

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## **Վայոց ձորի մարզի կրթության ոլորտի 2015թ. առաջին կիսամյակի**

Մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, որոնցից 15 հիմնական, 35 միջնակարգ, այդ թվում 2 վարժարան, 3 ավագ դպրոց ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: Քաղաքային և գյուղական համայնքներում գործում է 17 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված են 1052 երեխաներ: Մարզում գործում է 24 նախակրթարան:

Աշակերտների թիվը կազմում է 6683: Աշխատում են 1083 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն կրթություն:

Ուսուցիչ – աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1:6

Դասարանի միջին խտությունը 13 – է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17 ժամ:

Իրենց լիազորությունների շրջանակներում կանոնավոր գործում են դպրոցների կառավարման խորհուրդները, որոնց անվանական կազմը հաստատվել է մարզպետի 2012թ. հոկտեմբերի 12-ի որոշմամբ:

Բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով և միացված են համացանցին: Ավարտվել է ուսուցիչների հերթական մասնագիտական վերապատրաստումները:

Ամբողջությամբ լուծված է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը: Դրանց վարձավճարները հավաքագրվել են 98%-ով:

Օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել են շուրջ 600 աշակերտներ, որոնցից 48-ը իրավունք են նվաճել մասնակցելու հանրապետական փուլին:

Միասնական քննություններին մասնակցել է 234 դիմորդ, որոնց մոտ 55 %-ը հաղթահարել են դրական միավորի շեմը:

Կազմակերպվել է ծնողազուրկ, սոցիալապես անապահով և զոհված զինծառայողների ընտանիքների 195 երեխաների ամառային հանգիստը Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

Մարզի դպրոցներում ներդրվել և հաջողությամբ գործում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը:

Դպրոցները մեծ ակտիվությամբ մասնակցել են Հայոց եղեռնի 100-րդ տարելիցի և Հայրենական պատերազմում տարած հազթանակի 70 ամյակի ծրագրերով նախատեսված միջոցառումներին:

### ***Հիմնախնդիրներ***

1. Զերմուկի դպրոցների կարգավիճակի փոփոխություն:
2. Առաջնահերթ վերանորոգման են ենթակա Արտաբույնքի և Արենիի միջնակարգ դպրոցների շենքերը:
3. Առաջիկա տարիներին վերանորոգման կարիք ունեն Գողթանիկի, Հերմոնի հիմնական, Եղեգիսի, Գոմքի, Խնձորուտի, Մարտիրոսի միջնակարգ դպրոցների շենքերը:
4. Դպրոցական գույքի թարմացում, լաբորատոր սարքավորումների ձեռքբերում: